

տուծոյ ամէն:», Այս ձեռագիրը 1730ին Պոլսէն Բարիզ ղրկուած է:

Մէրտինցի Մելքոն Վ. Թասպասեան
 Հռոմայ Բրոքականտայի աշակերտն, որ 1680էն
 մինչեւ 1708 իր ծննդավայրի Հայերու մեծ մասը
 կաթողիկէ դարձընելէն ետեւ՝ գրեթէ բոլոր
 Հայաստան, Փոքր Ասիա եւ Կիլիկիա շրջած էր
 Հռոմայ հրամանաւ (Տիգրանակերտ-Բաղէշ-
 Վան-Մուշ-Կարին-Էջմիածին-Տրապիզոն-Սե-
 բաստիա-Գաղատիա-Խարբերդ-Կեսարիա-Մար-
 տին-Քիլիս-Անթապ-Սիս-Ատանա-Մարտին) եւ
 նոյն տեղերը կաթողիկէութիւն մուծած (իր
 Օրագրութիւնը): 1708ին Հռոմայ հրամանաւ
 Սիս կ'երթայ Եպիսկոպոս ձեռնագրուելու Պե-
 տրոս Բերիացի Պիծակ (կամ Պիսակ) Կթղս.էն,
 զոր կանխաւ կաթողիկէութեան դարձուցած էր
 եւ անոր դաւանութեան թուղթը Հռոմ ղրկած:
 Այնուհետեւ երբ իր ծննդավայրի բոլոր Հա-
 յերը կաթողիկէ կը դարձընէ, մնացորդ անձինք-
 ներու եւ Մարտինի Յակոբիկ Ասորիներու
 Գէորգ Պատրիարքէն 1713ին Տիգրանակերտի
 Վալիին կը մատնուի՝ իբրեւ «Փրանկացեալ եւ
 թշնամի տէրութեան», ուրկէ շղթայակապ Պոլիս
 կը բերուի 1714ին, եւ Եպարքոսին առջեւ ինք
 զինքն արդարացընելով՝ ազատ կը թողուի, եւ
 կը մնայ Պոլիս:

Այս միջոցին Պոլիս կը գտնուէին Կաֆայի
 հայ կաթողիկէ Եպիսկոպոսն Յովհաննէս Գէոր-
 գեան, եւ Եգիպտոսի Հայոց կաթողիկէ Արքեպս.ն
 Երեմիա, որ 1711ին Քահանայապետին կաթու-